գերահամբաւ էջս Դորին 'ի լուր բոլոր Ազգայնոց՝ գէթ առ յորդոր լինելոյ ամենեցուն փութալ այսու օրինակաւ կանխել 'ի նուիրապաշտութիւնս փոխանակ մեծածախ հացկերութի հանգստեան հոգւոց, յօգուտ և 'ի պայծառութիւն սրբոյ Էջմիածնի միակ տեղւոյն պարծանաց Ազգիս Հայոց, նոյնպէս Եկեղեցեաց և Դպրոցաց, որով արդարև Ազգս մեր միայն կարէ պանծալ 'ի փառս կրօնական և Ազգային յառաջադիմութեան օր քան զօր.

փոխանորդ Թեմակալին Երեւանայ

ՄԵՍՐՈՎԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ.

ի 5ն Մարտի 1870 ամի

Յերեւան

---

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Հոգաբարձուն Աստրախանայ Հայոց Հոգևոր Դըպրոցաց, Յարգոյ Յովհաննէս Գրիգորեան Պ. Սարգսեանց, Ազգային ջերմեռանդութենից շարժված Դպրոցների բարելաւութեանը ըղձալով՝ նուիրեց 'ի նպաստ դպրատներին մի հարիւր րուբլի արծաթ դրամ, ցանկալով կրել իւր վերայ կոչումն Բարեգործ Ընկերութեան, Վասնորոյ Հոգաբարձութիւնը նոյն Դպրոցների՝ ընդունելով նուիրագործեալ գումարը Պարոն Սարգսեանցէն՝ նշանաւորեց նորա անունը կոչումով Բարեգործ Ընկերութեան և յայտնեց իւր կողմանէ գրաւոր գոհունակութիւն. Ուստի Արարատ ամսագրոյ միջոցաւ կ'փութայ հրատարակել նոյն Պարոնի ազգօգուտ նուիրատուութիւնը, լիայոյս լինելով՝ որ շատերը համազգայիններից կնախանձաւորվին նորա այս օրինակ բարենպատակ գործոյն, և չեն զլանալ իւրեանց համակրութիւնը ցոյց տալ Ազգային Դպրոցներին, որոնք յատուկ միջոցն են ազգի յառաջադիմութեան.

Հոգաբարձուք՝ Աւագ Քահանայ Յովսէփ Բունիաթեանց.

Քրիստափոր Դադաշեանց.

Սարգիս Բուրջալեանց.

Սիմէօն Պօպօվեանց.

Գրիգոր Սողոմոնեանց.

Թ. 38

ի 24 փետրվարի 1870 ամի

Աստրախան.

---

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Անցեալ միջոցներում պատահեց ինձ իմ անձնական գործով գնալ Փամբակաձոր գաւառը. բայց ճանապարհին մասնաւոր տկարութիւն զգալով անձիս մէջը, ստիպուեցայ դադարեցուցանել շարունակութիւնս և շեղուելով ճանապարհից, կամեցայ հանգչել այն մերձակայ գիւղում, որ անուանվում էր Որդնաւ, "գուցէ Վարդաձոր". և մինչ այն գիւղի եկեղեցւոյ պարսպի մօտով անցանում էի, լսեցի յանկարծ մի քանի իրար խառնուած ձայն, որոնք երգում էին հայերէն, նորանց ձայնի դաշնակաւոր հնչմունքը շարժառիթ եղաւ իմ տկարութեանս մոռանալուն՝ դիմել փութացայ այն տուն, որից լսվում էր այն ձայնը. ներս մտնելով տեսայ որ յիսունի չափ երեխայք նստած ուսանում են. յետ սովորական ողջունին նորանց վարժիչ Գրիգոր Տ. Բաղդասարեանցի հետ, նստեցի. երգիչներ աւարտելով այն երգը՝ ուրիշ երկու երգեր էլ երգեցին. յետոյ հետաքրքրութեամբ ուզեցի իմանալ այն աշակերտների ուսանելի առարկայքը, որոնցից մի քանիսը, սովորում էին Ազգային և Սրբազան պատմութիւններ. Մնացեալքը, պարապումին հասարակ ընթերցանութեամբ, և գլխաւորապէս զարմացայ այն ռամիկ ժողովուրդի դէպ 'ի ուսումնասիրութիւն ունեցած ջանքը, որ այդպիսի մի աննշան տեղում՝ ուսման ճրագը սկսել է մասնաւորաբար լոյս տալ. ես միջոցին, բարեբաղդաբար, ներս մըտան հոգաբարձութեան երկու անդամները, որոնք ցուցին իմ հարցասիրութեան փափագը այն ուսումնարանի հանգամանաց մասին. նոցանից մէկին, Յովհաննէս Զաքարեանին, խնդրեցի տեղեկութիւն տալ ինձ, այդ Դպրոցի վաղուց հիմնաւորութեան կառավարութեան և որպիսութեան մասին. յիշեալ պարոն պատասխանեց ինձ այսպէս.

Մեր հասարակութիւնից մի անձն, Բաղդասար Տէր Բաղդասարեանց անունով, հիմնել է այս դպրոց և նորան պատկանում է սա. սորանից 40 տարի առաջ մինչդեռ մենք Տաճկաստանումն էինք, պարոն հիմնադրի պապը Բաղդասար Քահանայն ունեցել է մի հրաշալի Աւետարան, և ռուսաց առաջին պատերազմին, երբ Ալաշկերտու և Բասենու բնակիչներ գաղթեցին Ռուսաստան, յիշեալ Քահանայն Աւետարան իւր հետ բերեց. և նորա մահից յետոյ, Աւետարանի ուխտաւորներ, առատ նուէրք-

ներով ձոխացնում էին նորա ժառանգներին. սորա պէս, և միւս գաղթականների մէջ, շատ տեղեր գտնվում էին արդիւնաբեր Աւետարաններ, որոց տէրեր առանձին փայլում էին նոցա արդիւնք. մինչև անցեալ 1863 թուականին, հոգևոր տեսչութեան հրամանաւ ժողովուեցան ամէն տեղերից և Էջմիածին տարուեցան. պարոն Բաղդասարն Էջմիածին գնալով յետ բերել կխնդրէ աւետարանը, այս պայմանով միայն, որ ինքն Բաղդասար, իւրեան սեպհականութիւնից մի զոյգ սենեակներ շինէ յանուն Դպրոցի և Աւետարանի արդիւնքը ուսուցչի ռոճիկ տրուի. այս խոստմամբ Աւետարանը յետ ստանալով վերադարձաւ իւր տուն, և հիմնեց սենեակներ, և ուսուցիչ բերելով շուտով երեխայքը ժողովեցին այս տեղ և սկսեցին. բայց, աւաղ, քիչ միջոցից հակառակորդների նախանձախնդրութեամբ դադարեցաւ առ ժամանակ. իսկ երբոր, Նորին Վեհափառութեան Տ. Գէորգայ Սրբազնակատար Կաթուղիկոսի շրջաբերական կոնդակի երկնաբարբառ ձայն կլսէ յիշեալ պարոն Բաղդասարն, նոր սիրտ և հոգի առնելով կ'զօրանայ, ամրապնդվելով նորից սկսում է խնամել և շարունակել. և ըստ այնմ, մինչև ցայսօր կայ, և յուսալի է երկար շարունակութեան։

Յայտնաբարբառ խոստովանում էր այն պարոն՝ որ հաղորդեց ինձ այս պատմութիւն, որ և ինքն իսկ գանձապետ էր Աւետարանի նուիրանաց արդիւնին, թէ տարեկան 40ից մինչև 50 մանէթ արդիւնք հաղիւ ունի Աւետարան, և պակասորդը ընկնել 1867 թուականից, Տ. Բաղդասարեանցն ինքն է լցուցանում, և ցանկանում է աւելի պայծառացուցանել և առաջ տանել։

Արդարև տեսնելով այն դեռափթիթ երեխաների խումբը և լսելով այս պատմութեանն վերջին պարբերութիւն (որովհետև առաջիններ խիստ ծանր էին լսելու), ուրախացաւ սիրտս, և փառք ուղղեցի առ ամենաբարձրեալն, որ մեր ազգայնոց այն ամենափոքր մասերի մէջ, որոց կեանքի հանգամանքներին և վիճակների դրութիւններին նայելով, յաւիտեան անյուսալի կ'համարուի, թէ մի օր, սոցա մէջն ես ծաղկելու է ուսման անուշահոտ ծաղիկը, և ունենալ ձգտումն դէպ 'ի բարոյական շարժողութիւն. ինչպէս որ տեսայ, զարթնել էր նոցա մէջ ուսումնասիրութեան եռանդը, ուսման ճաշակն առնելով, հասկացել են նորա օգուտը. յիշելով և համեմատելով ուրիշ տեղիները այն տեսածիս հետ, ցաւեցի, որ նոքա մինչև ցարդ ուսմունք պատանեկութեան հասուցած պիտոյ էր լինէին. ընդ հակառակն, մինչ խանձարուրում փաթաթված էր, նոքա թուլասրտութեամբ անխնամք թողուցել են, և հոգին աւանդելու վերջակիտի վերայ հասած է։

Վերջապէս, մեր ուրախասիրտ շնորհակալութիւն արինք՝ թէ պարոն մանկավարժ Գրիգորին և թէ հոգաբարձու պարոններին, և ըստ կարի յորդորական խօսքերով խրախուսելից յետոյ՝ օթեցի այն գիւղումն, և առաւօտ առաջ տարայ իմ ճանապարհորդութիւնս։

Առաքել Յ. Արամեանց

2 Մարտի 1870 ամի

Լօռւայ Սանահնում

---

Խմբագրութիւն Արարատ ամսագրոյ.

Նախկին Հոգաբարձուք Հոգևոր Դպրոցին Նուխւոյ, իրենց պաշտօնավարութեան եռամեայ շրջանը լրացրած լինելով, 'ի տեղի նոցա՝ ընտրուեցան 'ի նոյն պաշտօն Հոգաբարձութեան, պատուարժան Աւագ Քահանայն Տէր Աւագեանց, Յովհաննէս Քահանայն Տէր Պօղոսեանց, և յարգի պարոնայք՝ Սօղոմոնն Սօտնիկեանց, Ղազարն Աթաբէկեանց, Յովսէփն Խառատեանց և Յակոբն Օրտուեանց. և Վեհափառ Կաթուղիկոսի հաստատութեամբ՝ մարտ ամսոյ 5-րդ օրը՝ մուտ գործեցին Հոգաբարձութեան պաշտօնի մէջ, և մեծ եռանդով՝ անձնանուէր են Դպրոցի յառաջադիմութեանը. տա՜ր Աստուած՝ որ այնպէս եռանդով վարեն. Հին Հոգաբարձուաց՝ Դպրոցի վարչութիւնից հրաժեշտ տալուն հետ 'ի միասին, միախորհուրդ՝ ուսուցիչքըն ևս հրաժարեցան. որպէս զի իրենց արձակմամբը՝ Դպրոցի Կառավարութեան խանգարումն տան, և պակասաւոր կացուցանեն ժողովրդոց առաջին՝ նորընտիր Հոգաբարձուքը. սակայն ընդունայն համարուեցան իրենց տկար մտածութեամբ. վասն զի յարգելի Հոգաբարձուք՝ ամենահարկաւոր միջոցներ գործ դնելով, փութանակի ընտրեցին ուսուցիչք և Դպրոցին դասատուութեան կարգը՝ առանց չփոթելոյ շարունակեցին։